NCPPR

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԱՆՈՐՅԱ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (2017 և 2018 ԹԹ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ)

Երևան 2019

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար և ուսումնասիրության իրականացնող՝
Արմենուհի Բուռնազյան

Ծրագրի օգնական՝ Աստղիկ Ավչյան

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ
www.policyobserver.am
www.facebook.com/PolicyObserver/

Պետական կառույցների կողմից ամանորյա հյուրասիրությունների, հանդիսավոր արարողությունների և այլ միջոցառումների կազմակերպման հետ կապված գնումների մոնիտորինգ (2017 և 2018թթ. համեմատական)

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են պետական մարմինների կողմից իրականացված գնումները 2017 և 2018 թվականների նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում: Ուսումնասիրությունը կենտրոնացել է ներկայացուցչական բնույթ կրող ծախսերի վրա, որոնք հիմնականում առնչվում են Ամանորյա հանդիսությունների և միջոցառումների, տարբեր հյուրասիրությունների և ճաշկերույթների կազմակերպմանը, պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված տարբեր ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև հուշանվերների, կոնյակների և ծաղիկների ձեռքբերմանը:

Ընդհանուր առմամբ, համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների (www.armeps.am), 2017թ. և 2018 թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում բյուջեից համապատասխանաբար դուրս է գրվել առնվազն 18,17 մլրդ և 7,98 մլրդ դրամ պետական մարմինների տարբեր կարիքների բավարարման հետ կապված գնումներ իրականացնելու համար: Պետք է նշել, սակայն, որ կան պետական մարմիններ, որոնք իրենց կարիքների համար արված գնումների պայմանագրերը չեն հրապարակում այս համակարգում (օրինակ՝ Գյումրու քաղաքապետարանը), ուստի ներկայացված տվյալները որոշակիորեն շեղվում են իրական գնումների պատկերից:

Հիմնվելով գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների և մամուլում ներկայացված պաշտոնական տեղեկատվության վրա՝ մեր ուսումնասիրության արդյունքներով Ամանորյա տոնական ձևավորման, հանդիսավոր արարողությունների և միջոցառումների կազմակերպման համար 2017թ. և 2018 թ. պետական մարմինները հատկացրել են համապատասխանաբար մոտ 178,2 մլն և 162,5 մլն դրամ: Ի դեպ, 2018թ դեպքում վերոնշյալ գումարը չի ներառում Երևանի Քաղաքապետարանի կողմից նոր գլխավոր տոնածառի ձեռքբերման և տեղադրման ծախսերը, որոնք վճարվել են «Էրեբունի-Երևան» տոնակատարությունների հիմնադրամի խնայողություններից և կազմել են 85 մլն դրամ:

2017թ ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնումները հիմնականում իրականացվել են գնանշման հարցմամբ (ԳՀ) և բաց ընթացարգերով (ԲԸ) (Աղյուսակ 1): Ի դեպ, 2017թ. Ամանորի տոնածառների տեղադրման և ամանորյա ձևավորման ու միջոցառումների կազմակերպման ծառայությունների խոշոր գնումները Երևանի քաղաքապետարանը իրականացրել է բաց ընթացակարգով և պայմանագրերը կնքվել են փետրվար, ապրիլ և սեպտեմբեր ամիսներին[1]: Այնուամենայնիվ, այս հանգամանքը չի բացառել ռիսկային գնումների առկայությունը: Այսպես, օրինակ, Երևան քաղաքի մայր տոնածառի և վարչական շրջանների տոնածառների տեղադրման և ձևավորման կազմակերպումը Երևանի քաղաքապետարանը վստահել է «Ձևավորում» ՓԲԸ-ին, որի հետ փոխկապակցված է, քանի որ այս ընկերության սեփականատերն է, և մինչ այժմ հանդիսանում է այդ ընկերության հետ պայմանագիր կնքած միակ պատվիրատուն[2] (Հավելված 1):

[1] Փետրվարին «ԷյՁի Պրինտինգ Հաուս» ՍՊԸ-ի հետ՝ 24,5 մլն դրամի, ապրիլին «Ձևավորում» ՓԲԸ-ի հետ՝ 21,99 մլն դրամի և սեպտեմբերին «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի հետ՝ 1,43 մլն դրամի պայմանագրեր և այլն:

Աղյուսակ 1.
Ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար ծախսերը 2017թ.

Պատվիրատուի անվանումը	Ընտրված մասնակիցը	Գնման ընթաց ակարգ	Գնման առարկայի անվանումը	Պայմանագրի գումարը (մլն. դրամ)
Երևանի քաղաքապետարան	Ա/Ձ Հայկ Ղազարյան, «Պրեստիժ լենդ» ՍՊԸ և այլն	ԲԸ	Ամանորյա ձևավորում և միջոցառումների կազմակերպում (տարբեր վարչական շրջաններ)	54[3]
Երևանի քաղաքապետարան	«Թիմսերվիս» ՍՊԸ	ՄԱ	Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայություններ	24,5
Երևանի քաղաքապետարան	«ԷյՋի Պրինտինգ» Հաուս ՍՊԸ	ԲԸ	Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայություններ (լուսադիոդային լամպերով)	24,5
Երևանի քաղաքապետարան	«Ձևավորում» ՓԲԸ	ԲԸ	Ամանորի մայր տոնածառի և վարչական շրջանների տոնածառների տեղադրում և ձևավորում	21,99
Աշտարակի համայնքապետարան	Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի	ԳՀ	Տոնածառի լույսերի և զարդարանքի զանազան պարագաներ	18,1
Աշտարակի համայնքապետարան	Ռուզաննա Պարոնյան Ա/Ձ	ԳՀ	Աշտարակ քաղաքի տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողություն և միջոցառումների կազմակերպում	1,5
Աշտարակի համայնքապետարան	Համլետ Գերյան Ա/Ձ	ԳՀ	Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությանը նվիրված տոնական ցերեկույթների կազմակերպում	0,5
Գյումրիի քաղաքապետարան			Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում	7[4]
Վանաձորի համայնքապետարան	«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ	ԳՀ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում	5,5
Ստեփանավանի համայնքապետարան	«Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ	ԳՀ	Ստեփանավան համայնքի ամանորի	3,9

[3] Ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված պաշտոնական տվյալների https://factor.am/27813.html, որոնց մասով, սակայն, բոլոր կնքված պայմանագրերը գնումների հաշվետվողականության կայքում չեն հայտնաբերվել:
[4] Ըստ Գյումրիի քաղաքապետարանի ներկայացրած պաշտոնական տվյալների https://www.a1plus.am/1576502.html

			տոնակատարության կազմակերպման ծառայություններ	
Սևանի համայնքապետարան	«Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ	ԳՀ	Սևան համայնքի փողոցների ամանորյա տոնական զարդարման ծառայություններ	3
Մարտունու համայնքապետարան			Ամանորյա միջոցառումների կազմակերպում	2,6[5]
Սիսիանի համայնքապետարան	Ա/Ձ Հայկ Հովհաննիսյան Հրաչիկի	ԳՀ	Ամանորյա հյուրասիրություններ	2,4
Մասիսի համայնքապետարան	«Նավիտաս» ՍՊԸ	ՄԱ	Մասիս քաղաքի փողոցների տոնական լուսավորման ծառայություններ	1
Մասիսի համայնքապետարան	«Նավիտաս» ՍՊԸ	ՄԱ	Մասիս քաղաքի գլխավոր տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ	1
Մասիսի համայնքապետարան	«Պրազդնիկ Ռոսսիի ՌՏ» ՍՊԸ	ՄԱ	Արարատի մարզի Մասիս քաղաքում ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայություններ	0,4
Արտակարգ իրավիճակների նախարարություն	Ա. Խաչատրյան համերգասրահ		Երեխաների համար միջոցառման կազմակերպման ծառայություններ	1,8
ՀՀ ոստիկանություն	Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն ՊՈԱԿ	ԳՀ	Երեխաների համար միջոցառումների անցկացման և կազմակերպման ծառայություններ	4
ՀՀ պետական պահպանության ծառայություն	Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն ՊՈԱԿ	ԲԸԱՀ	Ամանորյա ներկայացման տոմսեր	0,52
Ընդամենը				**178,21**

Նմանատիպ նախապատվության դեպքեր են նկատվել նաև «Թիմսերվիս» ՍՊԸ-ի և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի նկատմամբ, որոնց հետ ևս խոշոր պայմանագրեր են կնքվել և որոնց համար ևս Երևանի քաղաքապետարանը հանդիսանում է գրեթե միակ պատվիրատուն (Հավելված 2 և Հավելված 3):

2018թ. ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնումները դիտարկվող ժամանակահատվածի

[5] Ըստ Մարտունու համայնքապետարանի ներկայացրած պաշտոնական տվյալների https://www.aysor.am/am/news/2018/01/18/%C2%AB%D5%80%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%C2%BB/1362721

համար իրականացվել են հիմնականում ոչ մրցութային գնման ընթացակարգերով: Մինչդեռ, նման խոշոր գնումներ կատարելիս, ըստ Գնումների մասին օրենքի, նախընտրելի է մրցույթի հայտարարումը: Այս ժամանակահատվածում մեկ անձից գնման որոշումները հիմնականում արդարացվել են ժամկետների սղության պատճառով, քանի որ հնարավոր չէր կազմակերպել մրցութային կարգով նոր գնման գործընթացներ: Այնուամենայնիվ, Երևանի քաղաքապետարանի կողմից «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ կնքած 2 խոշոր պայմանագրերը (ընդհանուր 54 մլն դրամ) ռիսկային են, քանի որ միևնույն կառույցի կողմից խոշոր գնումները իրականացվել են մեկ անձից գնման սկզբունքով և միևնույն մատակարարից (Աղյուսակ 2): Բացի այդ, այս ընկերության հետ պայմանագրեր կնքվել են միայն 2018թ. և մեկ անձի գնման ընթացակարգով և ընդհանուր 5 պայմանագրերի գումարը կազմել է մոտ 212 մլն դրամ, որից երկուսը վերոնշյալ 2 պայմանագրերն են, իսկ երեքը կնքվել են Արտաքին գործերի նախարարության կողմից[6] (Հավելված 4):

Աղյուսակ 2.
Ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար ծախսերը 2018թ.

Պատվիրատուի անվանումը	Ընտրված մասնակից	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանումը	Պայմանագրի գումարը (մլն. դրամ)
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	ՄԱ	Երևան քաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողություն	30
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	ՄԱ	«Էրեբունի-Երևան 2800» տոնական միջոցառումների տարվա ամփոփման, նաև Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությանը նվիրված տոնական համերգների կազմակերպում	24
Երևանի քաղաքապետարան	«Թիմսերվիս» ՍՊԸ	ԲԸ	Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայություններ (լուսադիոդային լամպերով)	21,99
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Տոնածառի տեղադրման , ամանորյա միջոցառման և 200 հյուրերի հյուրասիրության կազմակերպում (Էրեբունի վարչական շրջան)	9,99
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Շենգավիթ վարչական շրջան)	9,95
Երևանի քաղաքապետարան	«Արմքոմփվի ններ» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Նոր Նորք վարչական շրջան)	8
Երևանի քաղաքապետարան	«Լամեքս» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Ավան վարչական շրջան)	6

[6] Օգոստոսին՝ 76. 135. 000 դրամի, սեպտեմբերին՝ 27. 089. 280 դրամի և նոյեմբերին՝ 54. 790. 000 դրամի պայմանագրեր:

Երևանի քաղաքապետարան	«Բրուս» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Աջափնյակ վարչական շրջան)	5,7
Երևանի քաղաքապետարան	«Սլայդ Արտ» ՍՊԸ	ՄԱ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Ավան վարչական շրջան)	5,5
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորման ծառայություններ (Արաբկիր վարչական շրջան)	5,31
Երևանի քաղաքապետարան	«Սիթիթայմ» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Կենտրոն վարչական շրջան)	5
Երևանի քաղաքապետարան	Ալեքսանդր Միերյան Ա/Ձ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան)	3,82
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Նուբարաշեն վարչական շրջան)	2,27
Երևանի քաղաքապետարան	«Հաղթանակ 2000» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Նորք-Մարաշ վարչական շրջան)	1,2
Երևանի քաղաքապետարան	Ալեքսանդր Միերյան Ա/Ձ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Արաբկիր վարչական շրջան)	1,94
Երևանի քաղաքապետարան	«Մադել» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում (Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան)	1,46
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արասո» ՍՊԸ	ԳՀ	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ, Ամանորին նվիրված միջոցառում	12,42
Վանաձորի համայնքապետարան	«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ	ԳՀ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում	4,48
Աշտարակի համայնքապետարան	Ռուզաննա Պարոնյան Ա/Ձ	Էլ. աճ	Աշտարակ քաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողություն	1,78
Մասիսի համայնքապետարան	«Նավիտաս» ՍՊԸ	ՄԱ	Մասիս քաղաքի գլխավոր տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ	0,99
Մասիսի համայնքապետարան	«Մասիսի մշակույթի կենտրոն» ՓԲԸ	ՄԱ	ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքում ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	0,65
«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Էլեկտրիկ» ԱԿ	ՄԱ	Տոնածառի և զարդարանքի զանազան պարագաներ	0,13
Ընդամենը				**162**

Ի տարբերություն վերոնշյալ գնումների, Երևան քաղաքի վարչական շրջանների ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար գնումները իրականացվել են բաց մրցույթի ընթացակարգերով և պայմանագրերը կնքվել են դեռ տարվա սկզբին: Շատ պայմանագրեր կնքվել են հատկապես «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի հետ (հունվարին և փետրվարին): Նմանապես Երևան քաղաքի լուսադիոդային լամպերով ամանորյա ձևավորման ծառայությունների ձեռքբերումը իրականացվել է բաց մրցույթի հայտարարման ընթացակարգով և պայմանագիրը կնքվել է մայիսին («Թիմսերվիս» ՍՊԸ՝ 21,99 մլն դրամ): Չնայած այս հանգամանքին, այստեղ ևս նկատվել են նախապատվության դեպքեր, ինչպես արդեն նշվել էր «Թիմսերվիս» ՍՊԸ-ի հետ, այնպես էլ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի հետ Երևանի քաղաքապետարանը 2018թ. կնքել է խոշոր գործարքներ և հանդիսանում է այս ընկերության միակ պատվիրատուն (Հավելված 5):

Վերոնշյալ տվյալներից երևում է, որ Երևանի քաղաքապետարանը մայրաքաղաքի ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար 2017թ. և 2018 թ. համապատասխանաբար ծախսել է առնվազն 125 մլն և 142 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, 2017թ. տարեկան կտրվածքով հուշանվերների գնման նպատակով դուրս է գրվել մոտ 108 մլն դրամ, իսկ 2018թ. ՝ 356 մլն դրամ: Սակայն պետք է նշել, որ այս տարեկան տվյալները այնքան էլ ճշգրիտ չեն արտացոլում իրական պատկերը և այսպիսի մեծ տարբերությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն նվերների ձեռքբերման համար կատարված գնումների ավելացմամբ, այլև այն հանգամանքով, որ հաճախ այսպիսի գնումները ներկայացվում են որպես ներկայացուցչական ծախսեր և հետևաբար դրանց հայտնաբերման և ճշգրիտ համեմատության համար անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրություն:

Այնուամենայնիվ, մանրամասն ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մեր դիտարկվող ժամանակահատվածում պետական մարմինները 2017թ. (30,5 մլն դրամ) մոտ 1,8 անգամ ավելի շատ գումար են ծախսել հուշանվերների ձեռքբերման վրա, քան 2018թ (16,9 մլն դրամ) (Աղյուսակ 3):

Այս ժամանակահատվածում առավել շռայլ է գտնվել Ազգային ժողովը՝ 2017թ ծախսելով մոտ 20,6 մլն դրամ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության շրջանակներում հուշանվերների ձեռքբերման համար:

Աղյուսակ 3.
Հուշանվերների, կոնյակների և ծաղիկների ձեռքբերման համար կատարված ծախսերը (նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում)

	2017 (մլն դրամ)			2018 (մլն դրամ)		
	Հուշանվեր	Կոնյակ	Ծաղիկ	Հուշանվեր	Կոնյակ	Ծաղիկ
Ազգային ժողով	20,6	4,3	0,6	0,7	0,5	
Ոստիկանություն	4,1			4,9	0,9	
Պաշտպանության նախարարություն	1,2			3,2		
Արդարադատության նախարարություն	1,2		0,1		0,3	
Սփյուռքի նախարարություն	0,9		0,01			
Երևանի	0,8		6,9			

քաղաքապետարան						
Արտակարգ իրավիճակների նախարարություն	0,6	2,1		0,2	0,4	0,3
Գլխավոր դատախազություն	0,2	0,4	1,4	0,07	0,2	0,1
Պետական պահպանության ծառայություն		0,6			0,6	
Արտաքին գործերի նախարարություն	0,3	2,3	0,4	0,4	1,2	
ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն		2,1	0,3	0,2	0,4	
Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	0,3			0,2	0,1	
Քննչական կոմիտե	0,3		0,1	2		
Պետական եկամուտների կոմիտե				3,2	3,4	
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն		0,7		0,9		0,07
Բնապահպանության նախարարություն				0,4		
Սահմանադրական դատարան				0,5		
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		0,3				
ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն		0,4				
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան					0,2	
ՀՀ դատական դեպարտամենտ						0,1
ՀՀ հատուկ քննչական ծառայություն			0,1			
ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն		0,3				
Քաղաքաշինության կոմիտե					0,3	
«ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին»		0,4				
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ			0,06			0,03
Ընդամենը	**30,5**	**13,9**	**10**	**16,9**	**8,8**	**0,6**

Հաջորդը Ոստիկանությունն է, որը 2017թ և 2018թ. հատկացրել է համապատասխանաբար 4,1 և 4,9 մլն դրամ հուշանվերներ ձեռքբերելու նպատակով: 2017թ. Ոստիկանությունը իր աշխատակիցներին նվիրել է մոտ 1. 9 մլն դրամի փայտյա քանդակներ և սրբապատկերներ, 1 մլն դրամի Գերմանական արտադրության տպագրված բաժակներ, գրիչներ և գրչատուփեր, 0,7 մլն դրամի մանրանկարներ, 0,3 մլն դրամի փորագրություններով ապակե և օբսիդիանե հուշանվերներ, ինչպես նաև 0,2 մլն դրամի փորագրված բարելիեֆներ[7]: Իսկ ահա 2018թ նույն կառույցը իր աշխատակիցներին 3,99 մլն դրամի հեռուստացույցներ[8] և մոտ 1 մլն դրամի ժամացույցներ[9] է նվիրել:

Բացի այդ, 2017թ. Ոստիկանությունը ծախսել է աշխատակիցների երեխաներին 3,6 մլն դրամի ամանորյա քաղցրավենիքի ու 4,2 մլն դրամի խաղերի հավաքածուներ[10] և 2018թ՝ 4,9 մլն դրամի նվերներ և պարագաներ ձեռքբերելու համար:

2018թ. դիտարկվող ժամանակահատվածում ձեռք է բերվել շուրջ 4,7 մլն դրամի 138 ձեռքի ժամացույցներ, որոնց պատվիրատուները բացի Ոստիկանությունից եղել են նաև՝ Պաշտպանության նախարարությունը, Քննչական կոմիտեն և Բնապահպանության նախարարությունը[11]: Բոլոր այս ժամացույցները ձեռք են բերվել «Էյ Դաբլյու Այ Գրուպ» ՓԲԸ-ից:

Բացի վերոնշյալ ժամացույցներից, Պաշտպանության նախարարությունը ևս 1,4 մլն դրամ է հատկացրել արծաթյա ոսկեպատ հուշամեդալների լրակազմերի[12] գնման համար:

Պետական եկամուտների կոմիտեն հատկացրել է մոտ 3. 2 մլն դրամ Կենտրոնական բանկից տարբեր տեսակի հուշադրամների և հուշանվեր-ափսեների ձեռքբերման համար:

Ի լրումն այս ծախսերին, 2017թ. ամանորյա տոների շրջանակներում կատարվել են մոտ 143,7 մլն դրամի գնումներ՝ սննդի ծանրոցների, ամանորյա նվեր-փաթեթների և խաղալիքների ձեռքբերման նպատակով: Այսպես, Երևանի քաղաքապետարանը ձեռք է բերել 134,3 մլն դրամի սննդի ծանրոցներ և նվեր-փաթեթներ, Ոստիկանությունը՝ 3,6 մլն դրամի քաղցրավենիքի («Ապարանք Շանթ» ՍՊԸ) և 4,2 մլն դրամի խաղերի հավաքածուներ («Բրուս» ՍՊԸ), Չարենցավանի համայնքապետարանը՝ 1մլն դրամի ամանորյա պարկիկներ և Աշտարակի համայնքապետարանը՝ 0,6 մլն դրամի խաղալիքներ:

Նմանատիպ ամանորյա նվերների գնումները 2018թ. կազմել են 112,2 մլն դրամ, որից Երևանի քաղաքապետարանը ծախսել է 92 մլն դրամ սննդի և քաղցրավենիքի ծանրոցների («Դեագա» ՍՊԸ և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ), Պաշտպանության նախարարությունը՝ 12,42 մլն դրամ Ամանորին նվիրված միջոցառման տոմսերի և նվերների («Արասո» ՍՊԸ), Ոստիկանությունը՝ 4,9 մլն դրամ նվերների և պարագաների («Գրանդ Քենդի» ՍՊԸ), Չարենցավանի համայնքապետարանը՝ 2 մլն դրամի ամանորյա պարկիկներ, Աշտարակի համայնքապետարանը՝ 0,6 մլն դրամ խաղալիքների և ՊԵԿը՝ 0,3 մլն դրամ կոնֆետների հավաքածուների ձեռքբերման համար:

---

[7] Բաժակներ 80 հատ՝ 9. 500 դրամով, Senator ֆիրմայի գրիչներ և գրչատուփեր 60 հատ՝ 4. 000 դրամով, մանրանկարներ 40 հատ՝ 18. 176 դրամով, փորագրություններով ապակե հուշանվերներ 10 հատ՝ 18. 500 դրամով և օբսիդիանե հուշանվերներ 5 հատ՝ 20. 000 դրամով, ինչպես նաև փորագրված բարելիեֆներ 10 հատ՝15. 150 դրամով:

[8] «ՎիԷլՎի Սենթր» ՍՊԸ-ից 38 հատ հեռուստացույց՝ 105. 000 դրամ արժողությամբ:

[9] «Հայկ Բալայան» ՍՊԸ-ից 65 հատ ժամացույց յուրաքանչյուրը 14. 769 դրամով:

[10] Քաղցրավենիքի հավաքածուներ 6000 հատ՝ 600 դրամով և խաղերի հավաքածուներ 6000 հատ՝ 694 դրամով:

[11] Պաշտպանության նախարարությունը 30 հատ ժամացույց՝ 60. 000 դրամով, Քննչական կոմիտեն 33 հատ՝ 48.939 դրամով և Բնապահպանության նախարարությունը 10 հատ՝ 40. 000 դրամով:

[12] 10 հատ լրակազմ յուրաքանչյուրը 140. 000 դրամ:

Վերոնշյալ տվյալներից երևում է, որ 2017թ. -ի համեմատ 2018թ. Երևանի քաղաքապետարանը ամանորյա փաթեթների ձեռքբերման վրա խնայել է մոտ 42,3 մլն դրամի գումար:

Ամանորյա շնորհավորական բացիկների համար 2017թ. հատկացվել է 1,5 մլն դրամ, որից 1 մլն դրամը պատվիրել է Ազգային ժողովը, մինչդեռ 2018թ. այս գումարը կազմել է ընդամենը 0,6 մլն դրամ:

Համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների 2017թ. տարեկան կտրվածքով ձեռք է բերվել 46 մլն դրամի կոնյակ, ի տարբերություն 2018թ. ՝ 20 մլն դրամի: Ինչպես հուշանվերների գնման պարագայում, այս դեպքում ևս նմանատիպ ծախսերը հաճախ գրանցվել են որպես ներկայացուցչական ծախսեր, հետևապես ներկայացված տարեկան ցուցանիշները չեն արտացոլում կոնյակների ձեռքբերման իրական պատկերը:

Այնուամենայնիվ, մեր դիտարկվող ժամանակաշրջանի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2017թ ձեռք է բերվել մոտ 13,9 մլն դրամի կոնյակ, ինչը 5,1 մլն դրամով գերազանցում է 2018թ. -ի կոնյակների գնումները (Աղյուսակ 3) :

2017թ. ամենաշատը կոնյակների ձեռքբերման համար տրամադրել է Ազգային ժողովը՝ մոտ 4,3 մլն դրամ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար խմիչք-հուշանվերներ գնելու համար: Կոնյակների հիմնական մատակարարը եղել է «Վինո վինո» ՍՊԸ, որի հետ խոշոր պայմանագրեր են կնքվել տարբեր տեսակի կոնյակներ ձեռքբերելու համար: Հատկապես աչքի է ընկել 4 կոնյակների գնումը՝ յուրաքանչյուրը 122. 000 դրամ արժողությամբ (“Ararat Single Cask”):

Կոնյակների մյուս խոշոր պատվիրատուները եղել են Արտաքին գործերի նախարարությունը և նրա պետական արարողակարգի ծառայությունը և Արտակարգ իրավիճակների նախարարությունը համապատասխանաբար՝ 2. 3 մլն և 2. 1մլն-ական դրամի կոնյակների գնումներով:

2018թ. կոնյակների ամենախոշոր գնումը իրականացրել է Պետական եկամուտների կոմիտեն՝ «Արբրեն» ՍՊԸ-ից ձեռքբերելով 3,4 մլն դրամի կոնյակներ[13]: Մյուս խոշոր պատվիրատուն Արտաքին գործերի նախարարությունն է եղել՝ կնքելով «Արտեքսիմ» ՍՊԸ-ի հետ 1,24 մլն դրամի երեք պայմանագրեր:

Ի դեպ, խմիչքների գնումներում հաճախ են հանդիպել կոնկրետ կառույցների նախապատվություններ որոշակի մատակարարների նկատմամբ: Այսպես, օրինակ, Արտաքին գործերի նախարարությունը և նրա պետական արարողակարգի ծառայությունը, Ազգային ժողովը և Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը շատ հաճախ կոնյակներ և այլ խմիչքներ ձեռք են բերել «Արտեքսիմ» ՍՊԸ-ից: Առավել հաճախ Արտաքին գործերի նախարարությունն է նախընտրել այս ընկերությունը՝ 2017թ տարեկան կտրվածքով 44, իսկ 2018թ՝ 49 պայմանագիր կնքելով նրա հետ: Նմանատիպ նախապատվության օրինակներ են նկատվել նաև Արտակարգ իրավիճակների նախարարության և «Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ-ի[14], ինչպես նաև Ազգային ժողովի և «Վինո վինո» ՍՊԸ-ի[15] դեպքերում:

Ինչ վերաբերվում է ծաղիկների գնումներին, համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, տարեկան կտրվածքով 2017թ. և 2018թ. պետական կառույցները հատկացրել են համապատասխանաբար 11,6 մլն և 26,8 մլն դրամ: Ի տարբերություն տարեկան

[13] 6 հատ՝ 45. 363 դրամ, 24 հատ՝ 29. 355 դրամ և 48 հատ՝ 20. 425 դրամ արժողությամբ կոնյակներ:

[14] 2017թ. Արտակարգ իրավիճակների նախարարության և «Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ-ի միջև 7 պայմանագիր է կնքվել:

[15] 2017թ. Ազգային ժողովը «Վինո վինո» ՍՊԸ-ից կատարել է 2 խոշոր գնում միասին մոտ 3,3 մլն դրամի, իսկ 2018թ. ՝ 4 գնում:

տվյալների, մեր դիտարկվող ժամանակահատվածում 2017թ. 9,4 մլն-ով ավելի շատ ծաղիկներ են գնվել քան 2018թ. (Աղյուսակ 3):

2017թ. առանձնապես աչքի է ընկել Երևանի քաղաքապետարանը՝ «Է.Ֆ.Դ» ՍՊԸ-ին ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների համար վճարելով 6. 944. 000 դրամ[16]: Ի դեպ, նմանատիպ խոշոր գնում 2017թ. սկզբին իրականացրել էր նաև Պաշտպանության նախարարությունը՝ ծախսելով մոտ 6,98 մլն դրամ տարբեր ծաղկային կոմպոզիցիաների ձեռքբերման համար:

Դիտարկվող ժամանակահատվածում ծաղիկների հաջորդ խոշոր գնորդը եղել է Գլխավոր դատախազությունը՝ մոտ 1,5 մլն դրամի ծաղիկների և ծաղկեպսակների գնումներով:

Ինչպես կոնյակների և այլ խմիչքների դեպքում, ծաղիկների գնումներում ևս նկատվում է մի շարք ընկերությունների գերիշխող դիրք և կոնկրետ կառույցների կողմից որոշակի մատակարարների նկատմամբ նախապատվություններ: Այսպես, օրինակ, Արտաքին գործերի նախարարությունը ծաղիկների ձեռքբերման համար գրեթե միշտ նախապատվությունը տվել է «Էնի Ռոուզ» ՍՊԸ-ին: Այս ընկերության ծառայություններից հաճախ են օգտվել նաև այլ կառույցները և հատկապես Քննչական կոմիտեն: Մյուս ընկերությունը «Է. Ֆ. Դ» ՍՊԸ-ն է, որին նախընտրում են հատկապես Երևանի քաղաքապետարանը և ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը:

Պետք է նշել, որ վերոնշյալ ժամանակահատվածի համար հուշանվերների, կոնյակների և ծաղիկների ձեռքբերումը երկու տարիներում էլ իրականցվել է հիմնականում գնումների ոչ մրցակցային ընթացակարգերով (հիմնականում մեկ անձի (ՄԱ), բանակցային ընթացակարգ առանց հայտարարության (ԲԸԱՀ) և գնանշման հարցման ընթացակարգերով): Բացառություն են եղել 2018թ. Ոստիկանության կողմից էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով ձեռքբերված 3,99 մլն դրամ արժողությամբ հուշանվերները (հեռուստացույցները) և Երևանի Քաղաքապետարանի կողմից ձեռքբերված սննդի և քաղցրավենիքի ծանրոցների մի մասը:

Համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, դիտարկվող ժամանակահատվածում տոնական և պաշտոնական հյուրասիրությունների և ճաշկերույթների կազմակերպման համար 2017թ և 2018թ. դուրս է գրվել համապատասխանաբար մոտ 47,69 մլն և 29,78 մլն դրամ (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4.
Ճաշկերույթների, ֆուրշետների և այլ հյուրասիրությունների համար կատարված ծախսերը (այդ թվում պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված) նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 30 ընկած ժամանակահատվածում

	2017 ընդհանուր (մլն դրամ)	2018 ընդհանուր (մլն դրամ)
Երևանի քաղաքապետարան	11,23	0,9
Արտաքին գործերի նախարարություն	7,7	11,1
ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն	0,9	1,4
Ազգային ժողով	7,3	-
Ֆինանսների նախարարություն	3,3	2
Հատուկ քննչական ծառայություն	2,6	-

[16] Ծաղկեպսակներ 60 հատ՝ յուրաքանչյուրը 44. 900 դրամ և ծաղկային կոմպոզիցիաներ 100 հատ՝ 24. 900 դրամով և 200 հատ՝ 8. 800 դրամով:

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	1,7	-
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	1,6	0,4
Դատական դեպարտամենտ	1,5	1,5
Գլխավոր դատախազություն	1,4	1,2
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1,2	-
Պաշտպանության նախարարություն	1,2	-
Պետական պահպանության ծառայություն	1	1
Ոստիկանություն	1	0,8
Արտակարգ իրավիճակների նախարարություն	0,8	-
Սահմանադրական դատարան	0,5	1,2
Քննչական կոմիտե	0,5	2,9
Քաղաքացիական ծառայության խորհուրդ	0,5	-
Քաղաքացիական ծառայության խորհուրդ	0,5	-
Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	0,4	0,03
Վարչապետի աշխատակազմ	0,2	-
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	0,2	0,05
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ	0,2	-
Առողջապահության նախարարություն	0,1	-
Գյուղատնտեսության նախարարություն	0,08	-
Մարդու իրավունքների պաշտպան	0,05	1,9
Քաղաքաշինության կոմիտե	0,03	0,2
Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	-	1,1
Արդարադատության նախարարություն	-	0,7
Բնապահպանության նախարարություն	-	0,2
ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	-	0,4
Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	-	0,7
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով	-	0,1
Ընդամենը	**47.69**	**29.78**

Ինչպես ցույց են տալիս տվյալները, Երևանի քաղաքապետարանը 2018թ. դիտարկվող ժամանակահատվածում ամանորյա հյուրասիրությունների կազմակերպման համար հատկացրել է մոտ 900. 900 դրամ[17]: Մինչդեռ 2017թ նմանատիպ հատկացումները կազմել են մոտ 12 անգամ ավել՝ 11.23 մլն դրամ 4 հյուրասիրության միջոցառումների կազմակերպման համար[18]: Զավեշտալի է,

[17] 200. 900 դրամի՝ 50 անձի և 700. 000 դրամի ՝ 350 անձի համար հյուրասիրություն:

[18] «Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ 5 մլն դրամի՝ 500 անձի, «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ի հետ 2. 725. 000 դրամի՝ 250 անձի, «Գուրգամ» ՍՊԸ-ի հետ 2մլն դրամի՝ 260 անձի և «Հատիսի լանջին» ՍՊԸ-ի հետ 1,5 մլն դրամի՝ 200 անձի հյուրասիրության համար:

սակայն 2018թ. 350 անձի հաշվով կազմակերպված միջոցառման համար մոտ 4 անգամ ավելի քիչ գումար է ծախսվել, քան 2017թ. 250 անձի հյուրասիրության համար:

Այնուամենայնիվ, բացի այս գումարներից, 2018թ. հյուրասիրությունների կազմակերպման համար Երևանի քաղաքապետարանը հունվար և փետրվար ամիսներին պայմանագրեր է կնքել «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի հետ 1. 987. 000 դրամի (260 անձի) և 5. 948. 000 դրամի (550 անձի) ամանորյա հյուրասիրություններ կազմակերպելու համար: Վերոնշյալ երկու հյուրասիրություններն էլ ներառված են եղել արդեն հիշատակված Երևանի վարչական շրջանների ամանորյա ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար կնքված խոշոր պայմանագրերի մեջ[19]:

Փաստորեն, 2018թ. Երևանի քաղաքապետարանը իրականում այս մասով հատկացրել է մոտ 8. 8 մլն դրամ, որը թեև դեռևս զիջում է 2017թ ծախսերին:

2017թ. հյուրասիրությունների կազմակերպման համար մյուս խոշոր պատվիրատուն եղել է Արտաքին գործերի նախարարությունը՝ ծախսելով 7. 7 մլն դրամ տարբեր միջոցառումների համար, որոնցից ամենախոշորը հանդիսացել է 3. 247. 000 դրամ արժողությամբ ամանորյա ֆուրշետը նախատեսված 300 անձի համար: Դիտարկվող ժամանակահատվածում այս կառույցի պատվերով կազմակերպված մյուս ճաշկերույթներն ու հյուրասիրությունները հիմնականում եղել են պաշտոնական պատվիրակությունների այցերի շրջանակներում[20]:

2018թ նույն ժամանակահատվածի համար Արտաքին գործերի նախարարությունը 3,4 մլն դրամով ավել միջոցներ է հատկացրել հյուրասիրությունների կազմակերպման համար, սակայն դրանց գերակշիռ մասը եղել են պաշտոնական պատվիրակությունների այցի շրջանակներում[21]: Այս անգամ ամանորյա ճաշկերույթի համար կառույցը ծախսել է մի փոքր ավել՝ 3. 84 մլն դրամ 320 անձի հյուրասիրություն կազմակերպելու համար:

Ազգային ժողովը 2017թ. ներկայացրել է միայն պաշտոնական պատվիրակությունների ընդունելության շրջանակներում կազմակերպված հյուրասիրությունների համար կատարված ծախսերը, որոնք կազմել են մատ 7.3 մլն դրամ, իսկ ահա 2018թ համար տվյալներ չեն ներկայացվել:

Ի տարբերություն նախորդ տարվա, 2018թ. Ֆինանսների նախարարությունը ավելի համեստ ամանորյա հյուրասիրություն է կազմակերպել՝ ծախսելով մոտ 1,5 մլն դրամ 350 անձի համար ֆուրշետի (2017թ. ՝ 3. 3 մլն դրամի 250 անձի համար) և 487.000 դրամ պատվիրակությունների համար ընթրիքի և սուրճի ընդմիջում կազմակերպելու համար:

Հատուկ քննչական ծառայությունը 2017թ ծախսել է մոտ 2.6 մլն դրամ ճաշկերույթների կազմակերպման համար, որից 1. 6 մլն դրամը հատկացվել է կորպորատիվ հավաքույթի կազմակերպման համար, իսկ մնացածը պաշտոնական պատվիրակությունների այցի շրջանակներում հյուրասիրությունների համար:

Հյուրասիրությունների կազմակերպման համար կնքված պայմանագրերի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այստեղ ևս կան նախապատվությունների և փոխկապակցվածության դեպքեր: Այսպես, օրինակ, Արտաքին գործերի նախարարությունը, հատկապես պաշտոնական

---

[19] Հունվարին կնքված ընդհանուր 27. 967. 000 դրամի և փետրվարին կնքված 46. 179. 000 դրամի պայմանագրեր:

[20] Օրինակ, 1. 068. 870 դրամի 12 անձի պաշտոնական ճաշի համար, 946. 660 և 725. 395 դրամ համապատասխանաբար ՌԴ և Բրազիլիայի արտգործնախարարների համար կազմակերպված պաշտոնական ճաշերի համար:

[21] Օրինակ, 4. 675. 000 դրամը՝ Երևանում անցկացվող «Ընդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի շրջանակներում ճաշի և սուրճի ընդմիջման, 857. 750 դրամը՝ ԵԱՀԿ հարցերով տնօրենի գլխավորած պատվիրակության այցի շրջանակներում պաշտոնոկան ճաշի և 550. 000 դրամը՝ ՀՀ-ում առաջատար լրատվական ծառայությունների գլխավոր խմբագիրների և ներկայացուցիչների ֆուրշետի համար:

պատվիրակությունների համար կազմակերպվող ճաշկերույթների դեպքում, առավել հաճախ օգտվել է «Կասկադ Ռոյալ» ՍՊԸ կողմից մատուցվող ծառայություններից: Ի դեպ, բացի մի քանի դեպքից, Արտաքին գործերի նախարարությունը հանդիսանում է այս ընկերության մշտական պատվիրատուն: Նմանապես, «Փրայմ Քեյթրինգ Քամփնի» ՍՊԸ-ի բոլոր պայմանագրերը այս կառույցի հետ են կնքված: Արտաքին գործերի նախարարությունը հաճախ է նախապատվություն տալիս նաև «Սալոն» ռեստորան ՍՊԸ-ին[22]: Նմանատիպ նախապատվություն ունի նաև Ֆինանսների նախարարութունը «Սալոն» ՍՊԸ-ի հանդեպ[23]: Մինչ այժմ, Ֆինանսների նախարարությունը այս ընկերության միակ պատվիրատուն է, և ի լրումն, այն սպասարկում է ֆինանսների նախարարության ճաշարանը, հետևաբար փոխկապակցված է կառույցի հետ: Հաճախակի ընտրված մատակարարների ցանկում են նաև «Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ, «Օնիրա Քլաբ» ՍՊԸ և «Օջախ» ՍՊԸ:

համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, դիտարկվող ժամանակահատվածում պաշտոնական պատվիրակությունների ընդունելության շրջանակներում ձեռքբերված ապրանքների և ծառայությունների համար պետական բյուջեից 2017թ. և 2018թ. հատկացվել է համապատասխանաբար մոտ 78,1 և 105 մլն դրամ: Այս ծախսերը ներառում են պատվիրակությունների ընդունելության համար հյուրանոցային, հյուրասիրության, տրանսպորտային, տպագրական և այլ ծառայությունների, ինչպես նաև հուշանվերների և այլ ապրանքների ձեռքբերման ծախսերը:

2017թ. այս ժամանակահատվածում առավել խոշոր գումարներ են հատկացվել Արտաքին գործերի նախարարության կողմից ԵԱՏՄ վարչապետների այցի շրջանակներում միջոցառումների կազմկերպմանը («Էքսպոմեդիա» ՍՊԸ՝ 7,23 մլն դրամ) և հյուրանոցային («Օնիրա Քլաբ» ՍՊԸ՝ 6,23 մլն դրամ), ինչպես նաև տրանսպորտային ծառայությունների ձեռքբերմանը («Միլենիում Սվիթ»՝ 4,5 մլն դրամ): Ազգային ժողովը բավական գումարներ է հատկացրել պաշտոնական պատվիրակության ընդունելության համար մանրանկարների և արձանների ձեռքբերման համար («Արեվ-Արթ Գելըրի» ՍՊԸ՝ մոտ 6 մլն դրամ):

2018թ. նույն ժամանակահատվածում պատվիրակությունների ընդունելության համար հատկացումները բավական մեծացել են, որը պայմանավորված է Երևանում անցկացվող «Ընդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի շրջանակներում միջոցառումների անցկացմամբ (ընդհանուր 105 մլն-ից 69,1 մլն դրամ): Առավել խոշոր գումարներ ծախսվել են Արտաքին գործերի նախարարության կողմից գլոբալ ֆորումի շրջանակներում անհրաժեշտ պիտույքների ձեռքբերման («Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ՝ 54,79 մլն դրամ), ճաշերի և սուրճի ընդմիջումների կազմակերպման («ՍԵԼ» ՍՊԸ՝4,68 մլն դրամ, «Գոլդ Ռեստ» ՍՊԸ՝ 3,1 մլն դրամ), ինչպես նաև տպագրական աշխատանքների ձեռքբերման համար («ԷյՋի Տպարան» ՍՊԸ՝ 2,8 մլն դրամ): Բացի այդ, այս ժամանակահատվածում այս կառույցի կողմից խոշոր գումար է ծախսվել նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII գագաթնաժողովի միջոցառումների շրջանակներում Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում օդափոխության համակարգի վերանորոգման աշխատանքների համար («Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ՝ մոտ 7 մլն դրամ):

Պետական եկամուտների կոմիտեն պատվիրակությունների ընդունելության և միջոցառումների կազմակերպման («Դայմոնդ Տուր» ՍՊԸ՝ 3. 78 մլն դրամ),

---

[22] Արտաքին գործերի նախարարությունը «Սալոն» ռեստորան ՍՊԸ-ի հետ 2017թ. ՝6, իսկ 2018թ. 39 պայմանագիր է կնքել:

[23] Ֆինանսների նախարարութունը «Սալոն» ՍՊԸ-ի հետ 2017թ. ՝2, իսկ 2018թ. ՝6 պայմանագիր է կնքել:

ինչպես նաև հուշանվեր-կոնյակների ձեռքբերման («Արբրեն» ՍՊԸ՝ 1. 96 մլն դրամ) համար մոտ 5,7 մլն դրամ է հատկացրել:

Ի դեպ, հատկանշական է, 2018թ. որ ամենախոշոր գործարքը կնքվել է նույն «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ, որը զբաղվել էր նաև Երևան քաղաքի ամանորյա հիմնական միջոցառումների կազմակերպմամբ (Հավելված 4):

2018թ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության շրջանակներում ապրանքների ձեռքբերման համար կնքված պայմանագրերի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է մի հետաքրքիր գործարք, որում Արտաքին գործերի նախարարության կողմից 450. 000 դրամի ծախս է կատարվել («Արդեան» ՍՊԸ), որպեսզի ձեռք բերվի 10 հատ Ծաղկունք և 5 հատ Սիրամարգի փետուրներ անվանմամբ վզկապներ՝ յուրաքանչյուրը 25. 000 դրամ արժողությամբ: Սակայն ավելի հետաքրքիր է այն փաստը, որ Արտաքին գործերի նախարարությունը հանդիսանում է վերոնշյալ ընկերության միակ պատվիրատուն և բոլոր գնումները իրականացվել են մեկ անձի գնման ընթացակարգով (Հավելված 6):

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ մեր դիտարկվող ժամանակահատվածում 2018թ. -ի գնումները հիմնականում իրականացվել են մեկ անձից գնման և գնանշման հարցման ընթացակարգերով և միայն ավելի վաղ կնքված պայմանագրերի հիման վրա գնումներն են կատարվել բաց մրցույթի ընթացակարգով: Ինչպես արդեն նշվել էր, այս որոշումը հիմնավորվել է մրցույթներ կազմակերպելու համար ժամկետների սղության պատճառով: Այնուամենայնիվ, մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ որոշակի ընկերությունների նկատմամբ եղել են նախապատվություններ հատկապես խոշոր գնումների իրականացման ընթացքում, որը չի կարող արդարացվել վերոնշյալ հիմնավորմամբ:

Նմանապես, 2017թ և-ս նկատվել են այսպիսի նախապատվությունների դեպքեր՝ չնայած այն հանգամանքին, որ այդ գնումները իրականացվել են ոչ միայն մեկ անձից գնման և գնանշման հարցման ընթացակարգերով, այլ նաև ավելի նախընտրելի եղանակներով՝ բաց մրցույթի և բանակցային ընթացակարգ առանց հայտարարության ընթացակարգերով:

Հավելված 1.
Երևանի քաղաքապետարանի և «Ձևավորում» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/67	Ձևավորում ՓԲԸ	01807916	02/02/2017	ԲԸ	դրոշների տեղադրման ծառայություններ	28980000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/68	Ձևավորում ՓԲԸ	01807916	08/02/2017	ԲԸ	Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման ծառայություններ	4995000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/70	Ձևավորում ՓԲԸ	01807916	09/02/2017	ԲԸ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	16955000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/10/3	Ձևավորում ՓԲԸ	01807916	14/02/2017	ԲԸ	Արարատյան 1-ին զանգ. հ 6/1 շ-ից դեպի Արարատյան 1-ին զանգ. հ 8/1 շ. տանող աստիճանների վերանորոգում	1860000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/10/7	Ձևավորում ՓԲԸ	01807916	14/02/2017	ԲԸ	Երևանի Հարավ-Արևմտյան մուտք ,,Շինարար Արծիվ,, Իսակովի պող. հենապատի վերակառուցում	2252000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/10/6	Ձևավորում ՓԲԸ	01807916	14/02/2017	ԲԸ	Անդրանիկի փ. հ 46 շ-ից դեպի մանկապատանեական մարզադպրոց համալիր տանող անցուղու աստիճանների վերակառուցում	1300000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/30/6	Ձևավորում ՓԲԸ	01807916	09/03/2017	ԲԸ	Երևանի Մայաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ	28950000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/114/1	Ձևավորում ՓԲԸ	01807916	11/04/2017	ԲԸ	Ամանորի մայր տոնաճառի և վարչական շրջանների տոնածառերի տեղադրում և ձևավորում	21990000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/113/1	Ձևավորում ՓԲԸ	01807916	18/04/2017	ԲԸ	§Երեբունի–Երևան՝ միջոցառման շրջանակներում դրոշակազարդման ծառայություն	4995000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲԸԾՁԲ-17/124/1	Ձևավորում ՓԲԸ	01807916	13/06/2017	ԲԸ	մշակութային շենքերի, տուն-թանգարանների ճակատային հատվածներում ցուցանակների պատրաստման և տեղադրման ծառայություններ	4980000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/47	Ձևավորում ՓԲԸ	01807916	22/01/2018	ԲՄ	Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման ծառայություններ	4950000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/33/1	Ձևավորում ՓԲԸ	01807916	24/01/2018	ԲՄ	դրոշների տեղադրման ծառայություններ	24933000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԱ/ՊՁԲ-18/42-2	Ձևավորում ՓԲԸ	01807916	01/02/2018	ԳՀ	Դրոշների ձեռքբերում	126000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԱԾՁԲ-18/25-1	Ձևավորում ՓԲԸ	01807916	21/02/2018	ԲՄ	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թվով երկու բակային տարածքների վերանորոգման աշխատանքներ	24100000

Հավելված 2.
Երևանի քաղաքապետարանի և «Թիմսերվիս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԾՁԲ-18/66	ԹԻՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	02264847	13/04/2018	ԳՀ	միջոցառումների կազմակերպման ծառայություններ	4950000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/97	ԹԻՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	02264847	11/04/2018	ԲՄ	Մշակութային միջոցառումների կազմակերպում	990000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/106-1	ԹԻՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	02264847	30/05/2018	ԲՄ	միջոցառումների կազմակերպման ծառայություններ	21990000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83-3	ԹԻՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	02264847	09/04/2018	ԲՄ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	9990000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՄԱԾՁԲ-17/70	«Թիմսերվիս» ՍՊԸ	02264847	15/12/2017	ՄԱ	Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայություններ	24500000

Հավելված 3.
Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՊԸԾՁԲ-17/11	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	25/01/2017	ՊԸ	միջոցառումների կազմակերպման ծառայություններ	4201000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՊԸԾՁԲ-17/24	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	14/03/2017	ՊԸ	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	1465000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՊԸԾՁԲ-17/29/1	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	15/05/2017	ՊԸ	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	6339000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-17/5/1	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	27/09/2017	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում	1432000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՄԱԾՁԲ-17/26	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	10/10/2017	ՄԱ	Տրանսպորտային ծառայություններ	1620000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՄԱԾՁԲ-17/34	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	11/10/2017	ՄԱ	Տրանսպորտային ծառայություններ	1200000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԾՁԲ-18/24-1	Պրեստիժ լենդ ՍՊԸ	01213386	25/12/2017	ԳՀ	Ավտոտրանսպորտի վարձակալության ծառայության ձեռքբերում	5065000

Հավելված 4.
Երևանի քաղաքապետարանի և «Ֆակտորի Փրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՄԱԾՁԲ-18/123	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	00167818	20/12/2018	ՄԱ	մշակութային միջոցառում	24000000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ՄԱԾՁԲ-18/122	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	00167818	19/12/2018	ՄԱ	մշակութային միջոցառում	30000000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ԱԳՆ-ԾՁԲ-ԳՖ-05	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	00167818	19/11/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	54790000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ԱԳՆ-ԱԾՁԲ-ՖՖ-44	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	00167818	13/09/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	27089280
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ԱԳՆ-ԾՁԲ-ՖՖ-35	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	00167818	24/08/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	76135000

Հավելված 5.
Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա ԷսՎԵ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԾՁԲ-18/50	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ	00465515	26/01/2018	ԳՀ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	298000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-4, ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-5, ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ	00465515	26/01/2018	ԲՄ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	27967000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-4	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ	00465515	12/02/2018	ԲՄ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	46179000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/18-1, ԵՔ-ԲՄԾՁԲ-18/18-2	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ	00465515	26/01/2018	ԲՄ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	15709000
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԲՄԾՁԲ-18/19-1	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ	00465515	24/01/2018	ԲՄ	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	5762000

Հավելված 6.
Արտաքին գործերի նախարարության և «Արդեան» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերը

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա6487891034	Արդեան ՍՊԸ	01274092	19/12/2017	ՄԱ	Ներկայացուցչական ծառայություններ	144000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա3143830346	Արդեան ՍՊԸ	01274092	17/12/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	450000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա5486328111	Արդեան ՍՊԸ	01274092	29/11/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	90000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա5486328111	Արդեան ՍՊԸ	01274092	29/11/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	90000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա6474280397	Արդեան ՍՊԸ	01274092	20/11/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	60000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա0469244177	Արդեան ՍՊԸ	01274092	10/10/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	30000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա6200033532	Արդեան ՍՊԸ	01274092	08/10/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	30000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա7453781026	Արդեան ՍՊԸ	01274092	03/09/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	30000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա2414705238	Արդեան ՍՊԸ	01274092	25/12/2017	ՄԱ	Ներկայացուցչական ծառայություններ	30000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա4217208968	Արդեան ՍՊԸ	01274092	18/12/2018	ՄԱ	Ներկայացուցչական ծախսեր	150000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա3664973892	Արդեան ՍՊԸ	01274092	12/10/2017	ՄԱ	Ներկայացուցչական ծառայություններ	145000
ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն	Ա 8670635984	Արդեան ՍՊԸ	01274092	28/11/2017	ՄԱ	Ներկայացուցչական և արարողակարգային ծառայություններ	30000